

ծաղկանց վրայ զմայիլել, թռչնոց բռնն ու ձագ-
տին նկատել, անասնկաց զլուսիները գգուել,
տառապելոց սրտի եւ արդեամբ կարեկցիլ, եւ
մարդկային սեռին յառաջդիմութեանը նպաստել:

« Ծնորդէ՛ յետոյ մեր ծնողացը հետ յիթուհը
չբթանց եւ կուրծ կրծոց իրարու հետ պատած՝
անմեկին եւ անբաժան թռչել սակէ, եւ քու
կամեցած նոր բնակութիւնը մտնալով՝ ըստ հա-
ճոյիցդ մնալ : »

Խ. Պ. ՄԻՍԱԲԵԱՆ

Հսկող կանթերը

Կը պըպըպայ կանթեղն հըսկող գիշերուան,
Եւ կ'արիւնէ լըռութիւնը սեւեակին :
Պասկերները կ'ոգեվարին պատին վրան,
Եւ ժանեակներ կուշան ակուրջ ամեն դին :

Բըմբուջ շաւքարն՝ ամեն գիշեր՝ զըբուրեան
Այքի մը պիս կը հըսկէ հոն տըսնազին,
Եւ կը նայի այգերուն որ կը մընան
Անխու՛ն՝ զանուած ըստուերածուփ ձեպունին :

Ան կը չըսէ հեծն ու հստայ հեփ սիրտին .
Եւ ակնողնին վրայ կը հեռայ ցոյն յեփն,
Դեռ այց չեղած, ետք պատրոյրը կը հիծծի :

Երկար մըռայջ սանջակները հոգեկան՝
Ինք, կարեկից, շողով մ'անուշ գրգուսակի
Կ'օժէ — որպիս թէ մօտ հոգին ըլլար ակ :

ՎԱՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ



Ա Ն Ի

(Այցելուի բռուցիկ յիտղութիւններ)

Կէս գիշերից անց՝ Թիֆլիսի կայարանում :
Այլացեղ, այլախզու, այլատարազ մի երկսեռ
բազմութիւն՝ իրար հրմշակելով, իրար կանչե-
լով դրո՞ւ է տալիս հագիւ կանգ առած գնացքի
վրայ, տեղ գրաւելու համար :

Մի սուր, յուսանատ ճիչ, անձկութեան
աղաղակի նման : Ծոգեկառքը գողգո՞ւմ է, ու
մենք թռչում ենք դէպի Ալեքսանդրապոլ :

Անցեալ տարուայ յունիսի վերջերսն ենք :
Գնացքում օդը կապարէ պէս ծանր է ու ճնդդ :
Մլուկներն ու լուերը միւս կողմից, մեզ հա-
լածում են դռնակների մօտ : Բայց, ինչպէս
գնացքի մէջ, նոյնպէս եւ դրսում օդն անշարժ
է : Ո՛չ մի շարժում, ո՛չ մի հեւք մթնոլորտում
ի զուր ենք մեր այրուած ճակատն ու կոկորդը
կարկատում դէպի գուրս, դռնակի պատուհանից
անդու՞նդի մտայլ երախի նման բացուած դէպի
գիշերը . արեւից խանձուած հեռաւոր բացաւ-
տանները եւ դաշտերի տաք շունչն է միայն
ներս խուժում : Բայց պէտք է ստաւօտ շատ
կանոխ օտքի վրայ լինիլ, բմբոխնելու հա-
մար Դիբեսի ձորակի վայրի գեղեցկութիւնը :
Ու ամենքս մի մի անկիւն ծուարում ենք :

Առաւօտեան ժամի Է-ին, երբ լոյրը ձեղըւում
է, պատրաստ կանգնած ենք պատուհանների եւ
դռնակների տակ : Մեր շուրջը, աջ ու ձախ,
բարձրանում են արեւադարձային բուսականու-
թեամբ գանգրաւորուած սարալանջիւր, որոնց
տակ երգելով, խաչտալով թաւալում է Գի-
բեոսի դետակը : Ահա՛ Սասնանի կանանչ սարերն
ու բլուրները, Բնութեան մէջ շատ քիչ անկիւն
կայ այնքան դիւթիլ ու այնքան նկարագեղ .
որքան Գուգարաց այս կն աշխարհը : Վեր ես
նայում, սարեր իրանց գլուխը կախած դիտում
են ակնապիլ . նրանք զարւանում են կարծես
իրանց զարաւոր լուռ ու խաղաղ կեանքի մէջ
կատարուած փոփոխութեանց վրայ : Նրանք
ո՛րքան բաներ էին առեւել. իրանց շուրջն զգա-
ցել էին մարդկանց ոգեկորուիլը, ցնծալը, վհա-
տուիլն ու տխրիլը. նրանք ունեցել էին տենդի,
յուզման ինչպէս եւ լքման ու մտայլ անդորրու-
թեան բուպնելու Բայց այդ բոլորը եղել էր ժա-
մանակաւ, մի՞թեան ինչպէս լացը աղմկել էին

նրանց խոժոռ մեկութիւնը մի պահ, ու նրանք զարձեալ գտել էին իրանց խաղաղութիւնը : Բայց մի օր իրանց ստորոտից անցաւ մի մութ վիշապ, հեռալով ու վշալով : Ծայնուհետեւ նրանք վերջին իրանց յաւիտենական հանգիստը : Գիւշեր ցերեկ տենդի մէջ են, գիշեր ցերեկ լսում են նոյն վշոցը, նոյն հեւը, նոյն գոռում գոչումը :

Իսկ կառախումբը, կարծես զբաւուած տեսարանի գեղեցկութեամբ, դանդաղօրէն, շուրջը դիտելով՝ ոլոր մուրը առաջ է շարժւում :

Ժամի 7-ն է, երբ հասնում ենք Դարաքիւնիս :

Մեր խմբին — բաղկացած՝ Պ. Պ. Բալանձարից, Լէօից, Տէր-Մարկոսեանից եւ Արժրուհու եւ Արամեանի խանդավառ հիացող՝ Թիֆլիսին հանրածանօթ՝ սեւ Սանտրօց — Դարաքիլատում միանում է եւ տիկին Բալանձարին զբաւակնելով : Դարաքիլատայից մինչեւ Աղեքսանդրապոլ՝ տեսարանը իր վայրի վիճմութիւնը չի պահում : Դաշտեր ու դաշտեր, արգասաւորում՝ շինակահի քրտիկներով :

11-ին Ալեքսանդրապոլի կայարանում ենք, ուր կատարւում է մեզ պրօֆէսոր Գր. Սալաթեանց, Սաղարեան ձեմարանի յարգելի Տեսուչը Գնացքից իջնելով՝ մեզ ընկերակից գտանք Պ. եւ Տիկին Տէր-Մարգարեանցին Եթէ հարկ լինէր ներկայացնել մեր նոր ուղեկցին, պիտի ստէի, որ Պ. Գասպար Տէր-Մարգարեանցը մի նաւթագործ է, որին եթէ աշխատէին նմանուել բոլոր հայ հարուստները, մեր զբաւանութեան համար քացուած պիտի տեսնէինք մի նոր դարաշրջան :

Պր. Սալաթեանց մեզ՝ ծանօթ ու անծանօթ հիւրերին՝ ընդունում է Նորինպարտութեան ստիպող սիրալիրութեամբ : Պէտք է ասել որ այդ ըտպէից սկսած՝ մենք՝ բոլորս՝ ազատ ու գոհունակ բանտարկեալներն ենք Սալաթեանց բնտանիքին : Կէս օրուայ ճաշից յետոյ, մեզ հետ ու նենայով Ալեքսանդրապոլի քաղաքապետին Պ. Գեղամ Տէր-Պետրոսեանցին եւ Սալաթեանց ամբողջ բնտանիքին, ճանապարհ ենք ընկնում դէպի Անի : Այնպէս որ մեր փոքրիկ խումբը՝ Թիֆլիսից մինչեւ Անի՝ ձիւնագնտակի նման թաւալեալով, թաւալելով ստուարանում, հասնում է 80 հոգու :

Ալեքսանդրապոլից մեկնում ենք 2 1/2 րէս, եօթը կառքով : Երկու եւ կէս ժամուայ ճանապարհից յետոյ, հեռուից նշմարում ենք ջրի մի արձաթեայ գօտի, որ արեգակի տակ իր լեռնէն

դուկ օղակները զալարելով՝ յառաջ է խաղում դէպի Ղօչավանք : Ախուրեանն է գետ, Հուշը գտնելով անցնում ենք պատմական գետի միւս ափը : Ուղեգծից շեղուելով՝ մեր կառքերը դուրսից դարձնել ենք սալիս դէպի Ղօչավանք կամ Հոռոմոս, որը պատմական շատ հետաքրքիր ու շատ թանկագին մի հնութիւն է : Այդ վանքում էր հաստատուած մեր կաթողիկոսարանը : Անիից այդ վանքն էին գալիս Բագրատունեաց թագաւորները իրանց արքայական օժույն ստանալու համար :

Երեկոյեան ստուերները՝ յամր ու հանդիսաւոր՝ իջնում էին արդէն մեր շուրջը տարածւող ընդարձակ դաշտերի խաղաղութեան վրայ, երբ Ղօչավանքի բարձրաւանդակին խլիպ երկու աշտարակաձե հնութիւնները սիւրւէտները երեւացին : Ըստ ոմանց յաղթական կամարի մընացորդներ էին դրանք, որի տակից անցնելիս են եղել Բագրատունեաց թագաւորները, ամեն անգամ Հոռոմոսի վանքը գնալու ժամանակ : Իսկ մի ուրիշ աւանդութեան համեմատ, այդ կաթողները բեկորներն էին մի վիթխարի զանգակատան, որտեղից ամէն անգամ հանդիսաւորապէս զանգակահարելիս են եղել, յայտնաբերուած կամար ժողովրդեան, որ թագաւորն ու նախարարները խորհուրդի են նստած Ղօչավանքի մեծ դահլիճում :

Հոռոմոսը թառել էր ձորակի լանջին, որի ստորոտից հանդարտ, անձայն հոսում էր Ախուրեանը, վախենալով որ մի գուցէ խանգարի պստիկաւելի հնութեան դարաւոր քուշը :

Ղօչավանքի ամենաուշագրաւ յիշատակաւանն է Ս. Յովհաննէսի եկեղեցին, որը Անիի եկեղեցիների ճարտարապետութեան մի նմոյշն է ներկայացնում : Եկեղեցու ներքին մասը զարդարուած է հրաշալի քանդակներով, իսկ արտաքին մասը չորս երկնասլացիկ կաթողիկէներով : Ս. Յովհաննէսում կար մի վարադուր, համեմատաբար աւելի նորոգոյն ժամանակների, ժՁ-ից զարի գործ, որ անդամագործութեան, նուրբ բանուածքի մի գոհար էր : Հետաքրքիր էին նոյնպէս Ս. Գեորգի եւ Ս. Միքայի գմբեթաւոր, անսիւն մատուռները, որոնց թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին սլիւեայլ մասերը արձանազրուութիւններով ծածկուած էին : Ղօչավանքում է գտնուում Բագրատունեաց Հարատուութեան դամբարանը : Յիշեալ երկու մատուռների կտրին տակաւին մինչեւ այսօր անխափար է մնացել — արդեօք այսուհետեւ էլ կը մնայ — Աշոտ Ողորմածի շիրիմը :

Արեւը վաղուց մայր էր մտել ու երեկոյեան ատուերները հետզհետէ խտանում էին ձորակի վրայ, երբ հեռացանք Չօպվանքից: Գիւղի միջով անցնելիս, դրան առաջ կանգնած գեղջկուհիները՝ մեզ տեսնելով՝ կասկածուէին թագնուէլ . . . իսկ Ախուրեանից փայտէ կուժերով ջուր փոխադրող մանչ ու աղջիկ երեխաները՝ իրանց կուժերը վար դնելով՝ հետաքրքրուած մեզ էին դիտում: Ու մինք՝ երկար ժամանակ, մեր ետեւից լսում էինք նրանց ջրբռնը, որ հրթիռների նման բարձրանում էր գելեբուռայ երկիւղած ու խաղաղ օդի մէջ:

7-8 վերտո հետաքրոթիւն միայն բաժանում էր մեզ Անիից: Մեր կարաւանը նորից ճանապարհ ընկած ու ժամի Զլին մտանք Բագրատունիների մայրաքաղաքը:

Իր մեծութեան, իր փառքի բեկորներով Անին յուզող, խռովող է ամեն Հայու համար: Բայց տեսնել աւերակներն այս աշխարհը առաջին անգամ, դիչըր ժամանակ, լուսնի ստգոյն ու եղբրական լոյսի ու մանաւանդ մեռած, խորոճակ, անասնման լուսթեան սակ . . . Կամայ ակամայ, յուզումը՝ մի տեսակ երկիւղից, վարանից, սրտի այրող, ճնշող յոյժոքից ծընուած՝ բռնում է ձեր կրկորդից եւ շնչահեղձ անում:

Ո՛րքան մեծ է յիշատակների հմայքը: Ու ո՛րքան սկար՝ դատողութեան, մտքի ուժը, երբ իր դէմ ունի զգացումներով փոթորկուած սիրտը . . .

Այժմ գեոնի հաւասար եղած երբեմնի փառայեզ քաղաքը, յանկարծ վերակենդանանում է ձեր մտքի մէջ իր նախնի ամբողջ մեծութեամբ: Այդ կիրափուղ պարիսպները, աշտարակները, եկեղեցիներն ու այլևայլ յիշատակարանները ձեզ մղում են խորհրդածութեան, ինքնամոտիման: Արտաքին այխարը՝ մի լուպէ լուսւ է ու զուգ ակամա՛յ էք դնում ձեր ներքին ձայնին . . . Կեանքը իր ուրախութեան ինչպէս արմուտթեան, վայելքի ինչպէս տառապանքի մէջ՝ յուզումների մի աղբիւր է, բայց Մահը, յաճախ, և աւելի մեծ, աւելի խորոճակ յուզումների աղբիւր է, որովհետեւ մեզ ցոյց է տալիս մեր բոլոր ճիգերի, մեր յանկուտութիւնների, մեր փառքերի, մեր յոյսերի եւ մեր երազների ու նայութիւնը . . . Մահուան առաջ, քայքայման գերագոյն տեսարանի առաջ է, որ մարդու կին տխարութիւնը թօթափում է իր զարբաւոր կեղեւը. ու երևան է գալիս ճշմարիտ իմաստութիւնը — նոյն վախճանն ունի մեծն

ինչպէս պղտիւր, իշխանն ինչպէս իշխանութեան լուծը կրողը, ճնշողն ինչպէս ճնշուողը . . . Անին այսօր վախատակներք մի կոյտ է, այո՛, բայց ո՛րը մնաց փառքը Ալիապաւանների, Ջինգիզ խանների, Թիմուր Լենգիերի . . . Յաղթողները չկան, բայց չկան նաեւ յաղթողները:

Նանապարհի խոնջնջնքն ու առուօտ վաղ վեր կենալու մասնագութիւնը՝ մեզ ստիպեցին շուտով ջուռն մտնել: Հետեւեալ օրը ժամի 1,2ին ամենքս ոտքի վրայ էինք արդէն: Հապճեպով նախաճաշուց յետոյ, սկսեցինք մեր արշաւը, որ կէս օրին միայն վերջացաւ: Պ. Գալանթարի խանդոտ, հանոյակատար ու գիտուն առաջնորդութեամբ — Մշակի խմբագիրը չորրորդ թէ՛ կնիգերորդ անգամն է որ այցելում է Անին — տեսանք ինչ որ Անին ունէր հետաքրքրութեան արժանի, պարիսպները, աշտարակները, եկեղեցիները, մատուռները, Պահլաւունքաց պալատն ու բաղնիքը, միջնաբերդը, քարայրները, եւն:

Ինսականաբար այսքան կարճատեւ ժամանակի ընթացքում կատարուած մի քննութիւն, ինձ հարկաւոր ձեռնհասութիւնը չի տար ձեզ խօսելու այս մտած քաղաքի բազմաթիւ հնութիւնների մասին: Մի այլաբանութիւն, որ այսքան անգամ կատարուել է արդէն եւ ապահովաբար սիրտի շարունակութիւն կատարուել մասնագէտ անձերի, գիտունների (*) կողմից խզմտօրէն ու արժանաւորապէս: Մեր խմբի այցելութիւնը՝ հայ ընթերցողների համար բոլորովին անհետեւանք չպիտի մնայ, որովհետեւ Պ. Լէօ — Թո՛ղ ներէ՛ անգաղղնապահութեանս — մուտադիր է Անիի նուիրել մի մասնաւոր գործ, որը՝ ինչպէս են իր տաղանդի բոլոր արդիւնքներն արդէն, խոստանում է լինել յուզումով, գեղեցիկութեամբ լեցուն:

Իսկ ի՞մ ընդհանուր տպաւորութիւնս այն եղաւ, որ Անին մէկն է, անկասկած գլխաւորը՝ մեր նախնի կեանքի հոյակապ յուշարձաններից: Առանց Անին տեսնելու, մարզ գուցէ կասկածի հայ ցեղի անցեալի մեծութեան մասին, մարզ գուցէ մտածէ՛ որ Բագրատունեաց եւ ընդհանրապէս հայկական թագաւորութիւն կոչուածը, մի փոքրիկ իշխանութիւն, մի անշնչու իշխանապետութիւն էր Արևելքի չբակայ թագաւորութիւնների եւ կայսրութիւնների մէջ:

(*) Պ. Պրօֆեսոր Մտո իր հանրածանօմ հեղինակութեամբ ու գիտութեան անձնուր մարդու անշաքարիդր եռանդով՝ այս ամառ ձեռնարկեց մի շարք սեղանների, Անիում:

տեղ: Ո՛չ, Անին՝ իր աւերակները միջին խօսում է մի անվիճելի մեծութեան, չլիճած մի անազին փառքը մասին: Ո՛րքան խելացի աշխատանք, որքան կամք ու հանճար են խտացած այդ չըսկայական պարիսպների, այդ վիթխարի աշտարակների, այդ հոյակապ, շքեղ եկեղեցիների եւ պալատների մէջ: Սի այնպիսի ժամանակում, երբ եւրոպական արուեստն ու ճարտարագիտութիւնը հազու սկսում էին թոթովել, հայ արուեստն ու ճարտարագիտութիւնը, Արեւելքում, խօսելիս են եղել այնքան շքեղու-

թեամբ ու վսեմութեամբ, որ նրանց հետքերը մինչեւ այսօր թողում, հիացում են ժամանակակից մարդուն:

Անին մեզ համար մի պատմութեան գիրք է այլապէս շահազրգիտ, այլապէս պերճախօս, քան այն բոլոր գրքերը որ թողել են մեզ մեր պատմագիրները: Անհրաժեշտ է, որքան կարելի է շուտ, կարգաւ այդ գիրքը, քանի ժամանակը, դիւրած՝ մարդրի անխելքութեամբ, չէ կատարել նրա վրայ իր վերջնական աւերները . . .

Թիֆլիս ՏԻԳՐԱՆ ԶԱՒԷՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Յրեանիմ ՄԱՔԼԷՐ

Վաղիւն երանց քազաւորին ի մօյսանն եւ զայ ծարման երկու ղնկեթօքն եւ հրանան սայ քազաւորն խաղաչ հնէ զօրացն եւ նախարարացն իւրոց եւ յոյժ զարեանայ:

Զօրք մեծ թագաւորն ի մօյտանն ելեալ Բազում մեծամեծօք ի գնտի խաղալ .
Տարեալ ծարման մանուկն եւ ի ձի հեծեալ,
Հաւասր իւր ընկերօքն ի մօյտանըն գալ:

Տեսին ըզնա որ գայր փատիչան ի վար .
Զրբն փրուա զամէն իրք ունէին սար .
Մանկօք ուժով(1) յաղթող որ ի հնան կար,
Մէկն էր Շիրիսար ու մէկն էր Փայիփառ:

Հրաման տայ թագաւորն ի խաղ մրտանել,
Եւ զուժն(2) եւ զմանկութիւն իւրեանց ցուցանել .
Զիով ծարման մանուկ հեծելըն խառնել,
Ընկերքն ի մէջ խաղըն ի յւրմէն գատել:

Խաղայր մանուկըն քալ ձիոյն եւ ճնմէր .
Անոյր զգուճան եւ ճերմակ ձիովըն գահէր .
Հանց որ ամէն հեծելն իւր մարդ չի հասնէր,
Դառնայր խաղով եւ գայր ի զօրքըն մտնէր:

Ըզգեստ արքայական եւ մազըն դեղձան .
Պատկերն լուսատու գերթ արեգական .
Հասակն էր գեղեցիկ անձարըն երկան .
Խաղայր դրոթ թագաւոր կամ ըզմեծ Սուլթան:

HISTOIRE DE PHARMANI ASMAN

TEXTE ARMÉNIEN

Publié et traduit par

Frédéric MACLER

IV

Pharmani arrive avec deux de ses compagnons; le roi [lui] donne l'ordre de lutter avec ses soldats et ses satrapes et il s'émerveille.

Le grand roi se rendit avec ses soldats sur la place, pour jouer à la balle avec nombre de ses grands; le jeune Pharman s'y rend, monté à cheval; il vient sur la place avec ses compagnons.

On le vit qui arrivait comme un roi, tout couvert d'armures; des jeunes hommes forts et victorieux qui l'accompagnaient, l'un était Chirinar (sic); l'autre Paipar.

Le roi donne l'ordre de commencer le jeu et de montrer leur force et leur jeunesse; le jeune Pharman, à cheval [s'élançant] disperse les cavaliers; ses compagnons dans le jeu se séparent de lui.

Le brave jeune homme jouait à cheval et se promenait; (fol. 52 vo) il prenait la balle et se pavanait sur le cheval blanc, de telle sorte que tous les cavaliers ne pouvaient l'atteindre; il revenait en jouant et pénétrait parmi les soldats.

[Ayant] des vêtements royaux et des cheveux blonds, une figure lumineuse comme le soleil, une taille élégante et une haute stature, il jouait comme un roi ou comme un grand sultan.